

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. դեկտեմբերի 23-ի
ընդլայնված նիստի /արձանագրություն N 8/

1. հանձնարարել ՄՀԼՇԿԿ ղեկավար Վարուժան Ավանեսյանին ս.թ. դեկտեմբերի 26-ին ռեկտորին ներկայացնել ինստիտուտի ներդրումային ծրագրի վերջնական տարբերակը ՀՀ ԿԳՆ ներկայացնելու համար:

2. ԵԹԿՊԻ-ի ուսումնական թատրոն-լաբորատորիայի զբաղեցրած տարածքի հետագա օգտագործման հարցի շուրջ ծագած խնդրի կապակցությամբ ռեկտորատի ընդլայնված նիստը որոշում է՝

2.1 ԵԹԿՊԻ-ի ուսումնական թատրոն-լաբորատորիային նոր շենք տրամադրելու հեռանկարով Ուսումնական թատրոն-լաբորատորիայի կողմից տարիներ շարունակ օգտագործված տարածքը չի կարող ինստիտուտից օտարվել և տրամադրվել Համազգային թատրոնին հետևյալ հիմնավոր պատճառաբանությամբ՝

2.1.1 ՀՀ-ում բուհերի լիցենզավորման կարգի համաձայն ուսումնական գործընթացն անխափան ապահովելու և որակյալ կադրեր պատրաստելու համար ինստիտուտը պետք է ունենա համապատասխան չափորոշիչներով սահմանված ուսումնաարտադրական տարածքներ,

2.1.2 Ուսումնական թատրոն-լաբորատորիայի տարածքն օտարելու դեպքում կլիսաթարվի ինստիտուտի ուսումնաստեղծագործական գործընթացը, որը բացասաբար կանդրադառնա կադրերի պատրաստման որակի վրա: Մինչդեռ ԵԹԿՊԻ-ն թատրոնի և կինոյի ոլորտների համար կադրեր պատրաստող, կրթության միջազգային չափանիշներին համապատասխանող միակ բուհն է հանրապետությունում:

Եթե Համազգային թատրոնը հանրապետությունում գործող թատրոններից մեկն է, ապա ԵԹԿՊԻ-ն կադրեր է պատրաստում բոլոր թատրոնների համար,

2.1.3 առաջիկայում Ուսումնական թատրոն-լաբորատորիայի գործարկման համար ներկայացված առաջարկվող շենքի նախագիծը չի համապատասխանում թատրոնի գործունեությունն ապահովող պահանջներին:

2.2 Ռեկտորատի սույն որոշումը հայտարարության ձևաչափով խմբագրելու և այն ս.թ. դեկտեմբերի 26-ին տարածելու նպատակով ստեղծել խմբագրական խումբ հետևյալ կազմով՝

- Ն. Սարգսյան
- Ա. Հարությունյան
- Ռ. Բարսյան
- Գ. Հովհաննիսյան
- Է. Մանասերյան
- Ա. Սարգսյան

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան